ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«.....» .....2013թ. N.....-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով»

Երևան քաղաքի ավագանի որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 13-րդ կետի 43-րդ ենթակետի դ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«դ) միջազգային վարկատու կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ Երևանում իրականացվող համաքաղաքային նշանակության ծրագրերի իրականացման վերաբերյալ,»

2) 13-րդ կետի 43-րդ ենթակետը լրացնել ե) ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝

«ե) հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի անունից իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ ծառայությունների մատուցման պայմանագրերը.»

3) 108-րդ կետի առաջին նախադասությունը՝ «Ավագանու նիստը հրապարակային է:», լրացնել հետևյալ խմբագրությամբ՝

«Երևանի ավագանու հրապարակային նիստերն ուղիղ եթերով առցանց հեռարձակվում են Քաղաքապետարանի համացանցային կայքում: Առցանց հեռարձակումն իրականացնում է Քաղաքապետարանի Աշխատակազմը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Առաջարկել Երեւանի քաղաքապետին՝ սույն որոշման ընդունումից հետո Երեւանի ավագանու հրապարակային նիստերի առցանց հեռարձակման համար անհրաժեշտ ծախսը ներառել Երեւան քաղաքի 2014թ. բյուջեի նախագծում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակներ՝
Երևան քաղաքի Ավագանու անդամներ՝ Ս. ՍԱՖԱՐՅԱՆ, Ա. ԲԱԽՇՅԱՆ,
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ավագանու՝ օրենքով վերապահված լիազորությունների իրականացման գործնական մեխանիզմներ սահմանելու եւ ամրագրելու, ավագանու աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը ապահովելու անհրաժեշտությամբ:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով (Ավագանու իրավական կարգավիճակը) ավագանին սահմանվում է իբրև Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ: Օրենքը նաև պարտավորցնում է Երևանի ավագանուն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս լինել անկախ և գործել միայն ի շահ Երևանի և նրա անունից:

«Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը թույլ է տալիս հանրային ծառայությունների ոլորտում համայնքի կողմից որոշ ծառայությունների մատուցման իրավասությունը փոխանցել իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչի վերբերյալ Երևան համայնքի անունից վերջիններիս հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքում Երևանի քաղաքապետը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը ավագանուն վավերացման պահանջ է ներկայացնում Երևանի քաղաքապետի կնքած այն պայմանագրերը, որոնք՝ 1) ավագանու կանոնակարգով սահմանված են որպես Երևանի համար էական նշանակություն ունեցող. 2) ուղղակիորեն նախատեսում են ավագանու հաստատում:

Օրենքի այդ պահանջին համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու որոշմամբ 2009թ. հունիսի 18-ին ընդունված և 2010թ. հունիսի 18-ին լրամշակված «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի» 13-րդ կետի 43-րդ ենթակետում Երևանի համար կենսական նշանակության են սահմանվել Երևանի քաղաքապետի կնքած 4 տեսակ պայմանագրեր. ա. այլ քաղաքների և վարչատարածքային միավորների հետ համագործակցության, բ. վարկերի, փոխատվությունների և օրենքով սահմանված այլ փոխառու միջոցների ներգրավման, գ. Երևանի մասնակցությամբ համատեղ գործունեության, դ. միջազգային վարկատու կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ Երևանում իրականացվող համաքաղաքային նշանակության ծրագրերի իրականացման վերաբերյալ պայմանագրերը: Դրանց շարքում չի ներառվել համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտում համայնքի անունից Երևանի քաղաքպետի և ֆիզիկական ու իրավաբանական անձնաց միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերը: Վերջիններս Երևանի ու համայնքի համար միանշանակ ունեն կենսական նշանակություն և պետք է ներառվեն այդպիսի պայմանագրերի շարքում: Մյուս կողմից, նման պայմանագրերի վավերացումը Երևանի ավագանու կողմից ուղղակիորեն առնչվում է Երևանի քաղքապետի գործունեության

նկատմամբ ավագանու վերահսկողական լիազորությունների իրականացմանը և այդ կապակցությամբ գործնական մեխանիզմ է սահմանում:

Երևանի ավագանու Կանոնակարգում առաջարկվող մեկ այլ փոփոխությամբ առաջարկվում է առցանց հեռարձակել Երևանի ավագանու հրապարակային նիստերը՝ այդ պարտավորությունը դնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վրա: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմնի՝ ավագանու աշխատանքներին հետևելու այս եղանակը կբարձրացնի ոչ միայն ավագանու աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը, այլև համայնքի բնակչին մասնակից կդարձնի Երևան քաղաքի կառավարմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Նախագծի հեղինակներ՝
Երևան քաղաքի Ավագանու անդամներ՝ **Ս. ՍԱՖԱՐՅԱՆ**
Ա.ԲԱԽՇՅԱՆ
Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակներ՝
Երևան քաղաքի Ավագանու անդամներ՝

Ս. ՍԱՖԱՐՅԱՆ
Ա. ԲԱԽՇՅԱՆ
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունմամբ փոփոխություններ պետք է նախատեսվեն Երևանի 2014թ. բյուջեի ծախսերում՝ նախատեսելով Ավագանու հրապարակային նիստերի առցանց հեռարձակման համար անհրաժեշտ գումարներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նախագծի հեղինակներ՝
Երևան քաղաքի Ավագանու անդամներ՝ Ս. ՍԱՖԱՐՅԱՆ
Ա. ԲԱԽՇՅԱՆ
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ